

ՏԵՂԵՎԱՏՈՒ

DEGHEGADDU

دیگه‌دادو

Հրատարակություն Գամիրելի Հ.Բ.Ը.Մ.Ի.

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

100-ԱՄԵԱԿ ԱԼ. ՍԱՐՈՒԻՆԱՆԻ



Գործ՝ Ալ. Սարուինանի

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ
(ԳԱՀԻՐԸ 1906)

Զախեն՝ ազ Պօղոս ՆոհՊար Փառս, ԿարսՊետ Շերիֆեան Պէջ, ԵսԳոհԻՊ
Արթին Փնջս, ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍՕՖ Պէջ, ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ
ԱՂԱԹՈՆ Պէջ, ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, Ս.ՌԱՔԵԼ ՆՈՒՊԱՐ Պէջ, ՏՈՔԹ.
ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՒԱՐԵԱՆ, ՑՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԿՈԲԵԱՆ



ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի Վարչութիւնը սիրով կը հրաւիրէ Միութեանս բոլոր անդամները, Տարեկան Ընդհանուր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ, Չորեքշաբթի 24, Մարտ 1999-ին երեկոյեան ժամը 7-ին՝ Հելիոպոլսոյ Հ.Ս.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ մարզարանին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

- 1- Ընթերցում և վաւերացում նախորդ տարեկան Ընդհանուր Ժողովի ատենագրութեան:
- 2- Ընթերցում վարչութեան 1998 տարեշրջանի միամեայ գործունեութեան բարոյական տեղեկագրին:
- 3- Ընթերցում վարչութեան 1998 տարեշրջանի միամեայ գործունեութեան նիւթական հաշուետուրթեան:
- 4- Ընթերցում հաշուեքննիչի տեղեկագրին:
- 5- Վաւերացում 1999 տարեշրջանի նախահաշի պիտեհի:
- 6- Ընտրութիւն հաշուեքննիչի և պատուագինի որոշում:
- 7- Ընտրութիւն վարչական երկու նոր անդամներու:



ԳԻՐՔԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Յունուար ամսուն տեղի ունեցաւ Գահիրէի գիրքերու 31-րդ Միջազգային Ցուցահանդէսը: Առաջին տարին չէ, որ ցուցահանդէսին առթիւ կը մտածեմ՝ Գահիրէի մէջ հայ գաղութին տարբեր հաստատութիւններու, ակումբներու և թերթերու մօն բազմաթիւ կուտակուած գիրքերուն մասին, որոնք մոռցուած կամ անտեսուած են և պէտք ունին վերացուցադրութեան:

Ինչո՞ւ վերոյիշեալ մարմինները չհաւաքուին եւ միաւնեղ որոշումով չկազմեն եգիպտահայ գաղութին մէջ գոյութիւն ունեցող գիրքերու ցուցահանդէս մը, որը կուտակուած գիրքերը կրնան յարմար գիներով ծախուիլ գաղութին հետաքրքրուող անդամներուն:

Եգիպտոսի կառավարութիւնը՝ որ անցեալ տասնամեակներուն կը տատամսէր գիրքերու հրատարակութենէն կամ ցուցադրութենէն՝ այսօր երբ մկան գործադրել «Ընթերցանութիւն Բոլորին Համար» ծրագիրը, որոն նպատակն է մատչելի գիներով գիրքեր հրատարակել և զանոնք հասցնել ամէն տարիքի ընթերցասէրներուն՝ անսպասելի յաջողութիւն գտար և ի յատ եկա ընթերցասէրներու թիվ բարձր տոկոսի մը գոյառութիւնը:

Եգիպտահայ գաղութը նոյնպէս՝ որքան որ հեռացած կը թուի գիրքերէն, այնքան փափաքը ունի հայ և օտար գրականութեան:

Գահիրէի Հ.Բ.Ը.-ի վարչութիւնը երկու տարի առաջ առաջարկած էր նման գաղափար մը՝ եգիպտահայ բոլոր հաստատութիւններուն, որոնք տարբեր պատճառներու և դժուարութիւններու համար տատամսած էին գործադրութենէն:

Ցոյսով եմ՝ որ կը վերաբնուի այս առաջարկը, և գոնէ դարավերջին առթիւ՝ կրնանք միաւնեղ պատրաստել Եգիպտահայ Գիրքերու Ցուցահանդէսը:

Հ.Զ.





ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆ

(1898 - 1977)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀՊԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿ

- Ծնած է 1898-ին՝ Կովկասի Արտամուշ աւանը:

- Նախնական ուսումը կը ստանայ Պաթում:

- 1909-ին՝ ընտանեօք կ'անցնին Պոլս, որ կը յաճախէ վիեննական Միջթարեաներու վարժարանը, և 1915-ին Կ'աւարտէ իր ուսումը:

- 1921-ին՝ իր առաջին երգիծակարը լոյս կը տեսնէ Պոլսոյ «Կավոշ» երգիծաթերթին մէջ:

- 1922-ին՝ կը մեկնի Վիեննա, որ Կ'աւարտէ տեղուն Գեղարդուստից վարժարանը:

- 1924-ին՝ կու գայ Գամիրէ:

- 1925-26-ին՝ կը հրատարակէ «Հայկական Սինեմա» երգիծաթերթը և կ'աշխատակցի Գամիրէի մէջ լոյս տեսնող ֆրանսատառ «Լա Լիալրեէ» թերթին: Մինչ այդ, ամ աշխատակցած է Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Շակատամարտ», «Վերշին Լուր», «Ժողովուրդի Զայն», «Հայ Կին» և ֆրանսատառ «Լը Ռեվէ» թերթերուն, ինչպէս նաև Պուտոնի «Հայրենիք» և նիւի Եռքի «Հայաստանի Կոչնակ»-ին:

- 1926-1928, կը մասնակցի «Սալոն տիր Գէր» և այլ հասարական ցուցահանդեսներու:

- 1928-1932, կ'աշխատի արարական մամուլին՝ ինչպէս «Ռոզ ալ Շուսէֆ», «Քաշքով», «Մուսթաքպալ», «Ապոլոն» և «Ալ Շարք Ալ Աստա» թերթերուն:

- 1931-ին՝ կը մասնակցի Պուբրէշի մէջ «Հայ Արուեստի Ցուցահանդէս»-ին:

- 1932-ին՝ կը ստեղծէ «Ըլ Մասրի Էֆէնտի» երգիծական տիպարը:



- 1934-ին՝ կ'աշխատակցի «Ախար Սաա» շաբաթաթերթին:

- 1937-ին՝ կը կազմակերպէ անհատական առաջին ցուցահանդէսը:

- 1938-1940, կ'աշխատակցի «Լա Պոլս Էժիփսիէն» օրաթերթին և «Լա Գարաւան» շաբաթաթերթին: 39-ին լոյս կ'ընծայէ «1938 Բաղարձական Տարին» ալպում:

- 1941-1946, կ'աշխատակցի «Խմաժ» շաբաթաթերթին, «Լը Փրոկրէ» և «Ժորժալ Տէժիփթ» օրաթերթերուն: Համաշխարհային երկրորդ պատերազմի աւարտին լոյս կ'ընծայէ «Սէթ Կէր» (այս պատերազմը) խորագրով ալպում:

1946-ին՝ կը սկսի աշխատակցի «Ախար Էլ Եռն» շաբաթաթերթին, և մինչեւ իր կեանքին վերը՝ կը շարունակէ իր աշխատակցութիւնը:

- 1952-ին՝ Գամիրէի մէջ «Լաւատեսութեան Դիտակ» անունին տակ, կը կազմակերպէ անհատական ցուցահանդէս մը:

- 1955-ին՝ Անհատական ցուցահանդէսներ կը կազմակերպէ Պէյրութի և Հայէայի մէջ:

- 1960-ին՝ ԱՄՆի «Ժողովուրդէ Ժողովուրդ» երգիծակարիչներու Յանձնաժողովին կողմէ՝ կը պարգևատրուի «Երգիծանկարներ Խաղաղութեան Համար» շքնաշանով:

- 1966-ին՝ Նկարագարդած է Յ. Պարոնեանի «Մեծապատի Սուրացկաններ»-ը:

Գամիրէի մէջ լոյս կ'ընծայէ իր երգիծակարչական երկու գործերը՝ «Մենք Մեր



Ակնոցով» և «Տես Խօսքերդ»:

-1963-ին՝ կը հրատարակէ «Մենք Հայերէն Չենք Գիտեր» զաւշտախաղը:

-1964-ին՝ Գամիրէի մէջ կը նշուի Սարուխանի գործումէնութեան 40-ամեայ յորելեանը:

-1968-ին՝ կ'այցելէ Հայաստան եւ ցուցահանդէսներ կը կազմակերպուին՝ Երևանի, Լենինականի և Կիրովականի մէջ:

Լոյս կը տեսնէ «Վասն Եօթն ու Կէսից Կարծեցեալ Մեղաց Մերոց» ժողովածուն, Պէյութ:

-1971-ին՝ կը հրատարակէ «Այրէ Ինչ որ Պաշտեցիր» և «Ուրբայ կը Հասնիմ Թաղումն Պատրաստեցէ» զաւշտմերը:

-1973-ին՝ Մոնթրէալի միջազգային Ցուցահանդէսի «Մարդոց Երկիրը»

յանձնաժողովէն կը ստանայ «Երգիծանկարիչ-Ընդունակություն» կոչումը:

-1974-ին՝ կը հրատարակէ «Ես Քեզ Գովեմ, Դուն Զիս» զաւշտը:

-1977 Յունուար 1-ին՝ կը մահանայ Գամիրէի մէջ:

Սարուխան իր կեանքի ընթացքին աշխատակցած է նախ Պէյութի «Անի» և «Շիրակ» պարբերաթերթերուն և «Զարթօնք» օրաթերթին, Փարիզի «Զուարթօնց» պարբերաթերթին, Պուտոնի «Պայքար» տարեգիրքին, Գամիրէի «Արեւ» օրաթերթին և խմբագրած է Հ.Բ.Ը.Մ.-ի «Տեղեկատու» պարբերաթերթը:

Ատենապետի պաշտօններ ստանձնած է Գամիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Գ.Մ.-ի և «Հ.Ա.Հ. Կոկանեան Սրան»-ի վարչութիւններուն մէջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆԻ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Եգիպտահայ հանճարեղ երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի (1898-1977) ծննդեան 100-ամեակին առթիւ, 6 Դեկտեմբեր 1998-ին, «Ալ Ամրամ» եգիպտական օրաթերթի գլխաւոր շէնքին ցուցաբարին մէջ՝ բացումը կատարուեցան երգիծանկարիչին գործերուն նոյնուած յորելեանական ցուցահանդէսին:

Սոյս ցուցահանդէսը՝ որ տեսեց 12 օր, կը պարփակէր կեանքի տարբեր հանգրուաններու առեղջազրութիւնները:

Ցուցահանդէսի ընթացքին, այցելու արուեստաէր հասարակութեան բաշխուեցան Գամիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի «Սարեմիկ Ծ. Զազլր» Հիմնադրամի հրատարակած Ալեքսանդր Սարուխանի կեանքին ու գործերուն նոյնուած գունաւոր ալպոմը:

Կիրակի, 13 Դեկտեմբեր 1998-ին տեղի ունեցաւ նաև Ալեքսանդր Սարուխանի ծննդեան 100-ամեակին նոյնուած ասովիս՝ «Ալ Ամրամ»-ի ժողովարարին մէջ: Ասովիս վարեցին եգիպտահայ արուեստագէտ Հրանդ Քէշիշեան և եգիպտական «Որդ ալ Եուսէֆ» հանդէսի գլխաւոր երգիծանկարիչ Կոմաս Ֆարանաթ:



ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ '99

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ՀՀ-ի նախագահ Ռոբերտ Քոչարեան ստորագրած է հրամանագիր մը՝ 1999-ի Սեպտեմբերի 6։ Հայաստան-Սփիտը յարաքրութիւններու նույրուած համահայկական համաժողով մը գումարելու մասին։

Խորհրդաժողովը նախապատրաստող կառավարական ծանծնաժողովը՝ Պաշտպանութեան նախարար Վ. Սարգսեանի և Արտարին նախարար Վ. Ուկանեանի ստորագրութեամբ, հրատարակած է յայտարարութիւն մը՝ որ Կըսուի։

“Սիրելի հայրենակիցներ,

Նախագահ Ռ. Քոչարեան բացադի նշանակութիւն կ'ընծայէ Հայաստան-Սփիտը յարաքրութիւնները որպական նոր մակարդակով կազմակերպելու հարցին։

Համագային նշանակութիւն ներկայացնող խնդիրները միախին քննարկել եւ միասնական շամքերով լուծելը՝ ամրող հայոթեան կամքն է։

Արժանավայելը մատուցանելով բոլոր ազգային, համակարգային, աշխարհիկ ու եկեղեցական կառոյցներուն՝ իրենց հայրենանուէր առաքելութեան համար, պէտք է արձանագրել՝ որ այսօր, ժամանակը եւ պատմական իրողութիւնները կը պահանջեն նաև նոր մերձեցումներ։

Այս ինչ որ կատարուած է պետութեան և զանազան կազմակերպութիւններու կողմէ՝ ՀՀ-ի անկախացումն ասոյին, բաւարար եւ համակարգուած չէ, չի համապատասխաներ համագային խնդիրներու լուծումին արդի պահանջներուն և մեր կարողութիւններուն։

Այսօր, հայոթեան բոլոր հատուածներէն մերս կը տիրէ այն համոզումը՝ թէ անհրաժեշտ է միացնել մեր ժողովութիւնը բոլոր առեղջարար ոյժերը, գիտակցի ազգային իդաերու ընդհանրութեանց, մշակել եւ կենաքի կոչել զանոնց իրականացնելու փոխադարձաբար ընդունուած միջոցները։

Միայն հայարական կամքը, միասնականութիւնը եւ ընդհանուր պատասխանադրութիւնն

է՝ որ կրնայ ապահովել նոր հազարամետակի մէջ հայ ազգին անվտանգ յարաւետումը, զարգացումն ու բարգավաճումը։

Հայոց նորանկախ պետութիւնը՝ այսօր առաւել քան երբեք, Սփիտը իր հայրենակիցներուն համապարփակ, նպատակա-ուղուած օժանդակութեան կարիք ունի։

Միաժամանակ, իրաքանչիր Սփիտը այս իր կողքին պէտք է զգա հայրենի պետութեան պաշտպանութիւնն ու աշակեցութիւնը։

Թանկագիտ հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ, նպատակը վեհ է, խնդիրը նասունացած է եւ խառակ։

21-րդ դարու սեմին, հայ ժողովուրդի պատմութեան այս բախտորոշ պահուն, մեզի կարելիութիւն կ'ընծայուի միացնել մեր բոլոր հոգեւոր, նիւթական եւ մտային կարողութիւնները՝ յանուն ազգային նպատակներու իրականացումին”։

ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ՝ ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՀՀ Մշակոյթի, Մարմնամարզի եւ Երիտասարդութեան Նախարար Ռոբերտ Չառոյիսան, իր նախարարութեան տարեկ մարզերու ծրագրումները և հեռանկարները հրապարակելով, յայտնած է, թէ 1999-ի ընթացքին, նպատակ ունի մշակութային փառատօն մը կազմակերպել՝ սփիտականութեան մասնակցութեամբ, հրահիրելով տարբեր մարզերու մշակոյթի գործիչներ։ «Սփիտը դրս պիտի չմնայ մեր մշակոյթէն», շեշտած է նախարարը։

Մինչեւ հիմա, հայ մշակոյթը արտաքին աշխարհին ներկայացնուած է անփոյթ եւ անտրամարանական ձեւերով։ անփութիւնը վերածուած է տեսակ մը մարտավարութեան, ոճի։



«Մշակութային արժեքները աշխարհի ներկայացմելու և օտարները մեր բաղադրակրութեան բարձրորակ արժեքներով ներշնչելու փոխարէն, Զախընտրուած էր այնպիսի մեկնակետային սկզբունք՝ որ հարազատ չէր, ու չէր ցոլացներ մեր արժեքները»:

Հստ Նախարարին՝ չունեցանք ազգային մշակույթի և ազգային սկզբունքներով առաջնորդող արուեստ, և երկար ժամանակ ասպարեզը անհակալշուկի մակարդակներու հասաւ «Չորրու պիզճէս»-ի հասարակ նախաձեռնութիւններու տեղի տալով:

ՍՓԻԻՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻ ԱՆՇԱՐԺ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

«Մէկ ԱԶԳ, Մէկ ՄԾՎԱԿՈՅԹ» փառատօնի ընթացքին, ՀՀ Պատմութեան և Մշակույթի Ցուշաբաններու Պահպանութեան նախաձեռնութեամբ, պիտի կազմակերպուի միշագագային գիտաժողով մը՝ ընթարկելու համար ափինորի հայկական պատմամշակութային անշարժ ժառանգութեամ ուսումնասիրութեան և պահպանութեան հարցերը:

Մոռացութենան փրկելու ազգի նպատակն մղուած, հոգեւոր մշակութային այս մասներները՝ տեղ գտնելով հայոց պատմութեան տարեգործեան էջերուն մէջ, մատչելի պիտի դառնան՝ պատմաբանին, հետազոտողին, ժամանակագրողին, արուեստագէտին:

Բոլոր այդ գերեզմանները, զանգակատունները, աղօթարանները, հասարակական շենքերը՝ դպրոց, հիմնադասոց, ծերանոց, կը կարծոի թէ ցորած են Հայկաստանի, Խրանի, Թուրքիոյ, Վրաստանի, Ռուսանի, Շունաստանի, Լեհաստանի, Իտալիոյ, Ֆունաստանի, Ֆրանսայի, Անգլիոյ և Ամերիկայի տարածքին:

«Տեղեկատու». Հայաստար՝ վրիպունով միայն, զանց եղած են՝ միջնադարեան հայ գաղքածախներին, Եգիպտոսի, Երուսաղեաի, Հալէպի, Կիպրոսի, Ռուսանիոյ, Հունգարիոյ պատմական անցեալով հարուստ զաղութները, իսկ նորերէն Լիքանանի կենսունակ զաղուրը:

ԵՌԱԿՈՂՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին Վարչութեան նիմնելիք Հետազոտական Կեղրոնին, Գահիրէի Համալսարանի բանասիրական ֆագիլյանի և Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի Սրբագիտութեան Ամբիոնին միջև եռակողմ գիտական համագործակցութիւն ստեղծելու մաիմն ծրագիր մը մշակուած է, որ իր լրումին պիտի հասնի յետազային:

Այս եռակողմ գիտական համագործակցութեան ծրագրին մէջ պիտի ընդգրկուին հայագիտական և արաբագիտական նիմնական ուղղութիւնները:

ա. Պատմագիտական և աղբիրագիտական ուսումնասիրութիւններ:

բ. Բանասիրական ուսումնասիրութիւններ:

Գիտական համագործակցութեան իրականացումին ընդհանուր պատասխանատութիւնը դրուած է Ամբիոնի Վարչի Սամուել Կարաբեկնամի վրա:

«ՏԵՂԵԿԱՑՈՒ» . Սրտանց կ'ողջունենք այս յուսալից նախաձեռնութիւնը և շուտափոյթ իրացործուն կը մաղթենք:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Հաստատուած է Սուաշին Համահայկական Խաղերու միջն ժամկետը, խաղերը տեղի պիտի ուժինան Երեւանի մէջ, 1999-ի Օգոստոսի 28-էն մինչև Սեպտեմբեր 5:

Սուաշին Համահայկական Խաղերը կը դառնան անցնանող հազարամեակի հայ երիտասարդութեան սփորի և մշակույթի փառատօնը:

Սուաշին Համահայկական Խաղերը՝ երրորդ հազարամեակի և Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունելու 1700-ամեակի տօնակատարութերու նախաշեմին, համայն հայութեան միասնութեան վկայութիւնը պիտի ըլլան:

Հայաստանի և Սփիհորի հայութեան համատեղ ոյժերով միայն, հնարաւոր պիտի ըլլայ կայացնել Սուաշին Համահայկական Խաղերը:



ՀՐԱՇՎՈՐԾ ՄԱՆՈՒԿԸ *

Յետ-Աստուածայայտնութեան Տօնի Խորհրդածութիւն Մը



«Յովսէփ, աճապարէ՛, մանուկը և իր մայրը առ և Եգիպտոս փախչէ՛: Հոն կեցիր մինչեւ որ ես քեզի ըսեմ. որովհետեւ Հերովդէս պիտի փորձէ մանուկը սպամել»: Սյավէս պատղամեց Ցիրոշ հրեշտակը Յովսէփի, երբ ան Մարիամի և մանուկ Յիսուսի մետ կը պատրաստուիր Բեթղեհեմէն Նազարէթ Վերադառնալու:

Յովսէփ աճմիշապէս վերիշեց՝ թէ ինչպէս Աստուած միջամտած էր իր ճշանածին և իր կեանքին մէշ, և իրենց յարաքերութեան մասնայառոկ ճշանակորին մը տուած: Ցարդ՝ անոնք հնազանդած էին Աստուծոյ Խորհրդատր մատին ճշտած ուղղութեան, և զգացած՝ որ իրենց կեանքը օրինուած էր անուշիկ մանշուկով մը, որուն առջեւ խոնարհած էին նրկինքի հրեշտակներն ու երկրի մոգերն ու հովինները:

Յովսէփ դարձեալ համբերութեամբ և նոր Խորհրդաներու տեսիլքով՝ անսաց հրեշտակին հրաւերին, և Մարիամն ու մանուկ Յիսուսի մը վրա հեծցուցած՝ բռնեց Եգիպտոսի ճամբան: Մինչ Հերովդէս՝ մոգերէն խարուած ըլլալու մոլուցին մէշ, հրահանգեց սպանել Բեթղեհեմի երկու տարեկանեն վար եղող բոլոր տղաքը, որոնք կարկուտէն զարնուած նոննինի ծաղիկներուն նման թափինքան:

Անորոշութիւն, մերժում եւ թշուառութիւն շրջապատած էին նորակազմ ընտանիքը, որ տակալին իր զաւակը հօրենմական տան քաղցր երդիքին տակ գգուելու երշանկութիւնը չէր ունեցած, և ահա ճանապարհի յոգմութեան վրայ բարդուեցաւ կեանքէն գրկուելու վրանգը. երբ աւազակներու վոհմակ



մը պաշարեց զինք՝ վաճառականական բանուկ հանգրուածի մը:

Աւազակապետը խոճաց աղքատ ընտանիքին վրայ, և հրահանգեց իր ընկերներուն՝ հեռանալ, նոր ու պարարտ որս մը հետապնդելու համար: Սակայն, աւազակներէն մէկը յամեցաւ և եզակի կարելցանքով մը թուզէիր, Մարիամն ու մասուկ Յիսուսը առաջնորդեց իր անշուր խրճիթը, որ քարայր մըն էր:

«Հաց հրամցու՞ր և ջուր տաքցու՞ր» հրահանգեց ան իր կնոշ, իրենց ունեցած համեստ պայմանները սիրազեղ սրտով մը հիտերուն հետ բաժնելու շեմ անկեղծութեամբ մը,

Մինչ անդին, ցցոտիներու մէջ փարթուած երեք տարեկան տղայ մը՝ անկինը քաշուած կը տքար, բրդոտութեան ճիրաններուն մէց:

Տպարիչ և յիշատակելի էր այն կարճ պամբ, երբ երկու անձանօթ ընտանիքներ իրարու հնար բաժնեցին Աստուծոյ պարգևելը բարիբները և կեանքի դառն փորձառութիւնները:

Մարիամ, արդէն վարժ ամէնէն նախնական պայմաններուն յարմարելու, լոգուց իր երեխան, նոյն լաթերուն մէջ ծրաբեց, կուրծքին սեղմեց, նստաւ իշուկին վրայ և ամուսինին նունիէն նամբայ իմկա:

Աւազակին կինը, տաքցած չուրը օգտագործելու հապճապին մէջ, իր տղան մոցուց տաշտին մէջ: Լոգանքէն եռք, այր ու կին ապշած իրարու երես նայեցա՞ երբ տեսան թէ տղան մաքրուած էր իր վերքերէն և անսարա կաթի սպիտակութեամբ կը փալէր: Առաջին անգամ ըլլալով՝ ծնողական աղուր սիրով մը համրութեցին իրենց զաւակը և ուրախութեան արցունքներ թափեցին:

Մանուկ Յիսուս, անձանօթ վայրի մը մէջ, անձանօթ մարդոց տառապեալ ու մեղսալից կեանքը կերպարանափոխած էր իր առաջին հրաշքով:

Մինչ թուզէի, Մարիամ և մասուկ Յիսուս շարունակեցին իրենց ճամբան, աւազակը, կինը ու տղան վայելնեցին նրաշքին ներգործութիւնը՝ առանց նոյնին մոտածելու թէ կրնային հասնի հիտերուն ետևին և զանոնք գերազանց ուրախութեան բաժնեկից դարձել:

Այդ րոպէէն երկու տղոց ճամբաները իրարու անշատուուած էին...: Առաջինը՝ երեսուն տարեկան հասակին, Աստուծոյ սիրոյն և փրկութեան պարզեցին բաշխիչը եղաւ, երեք ասոր տարիներ, իսկ երկրորդը՝ հօրը նման, աւազակութեամբ վաստկեցաւ իր սեւ հացը, մինչև որ Աստուծոյ մէկ այլ տնօրինութեամբ՝ դարձեալ իրարու հանդիպեցան, երկրաւոր կեանքի աւարտին, Գողգոթայի բարձունքին կանցնած խաչերու դժիւմ մտերմութեան մէջ:

Հոս, կեանքի-մահուան-յախտենական կեանքի հանգույցին՝ կատարուեցաւ մարդկային-աստուածային տրամին ամէնէն յատկանշական երկխօսութիւններէն մէկը, երբ աւազակը՝ այս անգամ գիտակցօրէն, կամովին և ապաշխարութեամբ՝ դարձեալ կեանք, և իհա՛ կեանք, խնդրեց Յիսուսէ, և Փրկիչը՝ գերբնական ներդաշտութեամբ մը, ըստ.- «Ծշմարիտ կ'ըսեմ, որ պաօր իսկ ինձի մեւ դրախտին մէջ պիսի ըլլաս»:

Ահա՝ պասպէս, ֆիզիքական բրդոտութենէն մաքրուած աւազակը՝ հոգեւոր մկրտութեամբ սրբուած, հրաշագործ մանուկին ձեռքէն բռնած մտաւ Աստուծոյ Թագաւորութենէն ներ:

Նարեկ Շ. Վոր. Ակնէմէզեան

* THE TABLET, 19/26 December 1998

Անգիյու մէջ հրատարակուող կրօնական շաբաթերթին մէջ լոյս տեսած բանաստեղծութեան մը տողերուն վկա հիմնուած այս գրութիւնը՝ ասանդապատուս մըն է, որ կապուած է Մանուկ Յիսուսի Բնաթեթեմէն Եգիպտոս փախուատին (Մտք.2.13-18) և խաչերութեան (Ղկ. 23.32-43) հետ:

«ՏԵՂԵԿԱՏՈՒ». Հանոյրով կ'ողջունենք գրական այս սեռին մշակուածը, և կը յուսանք՝ որ Հոգեշնորի Հայր Սուրբ նոր աւանդապատումներով կ'ուրախացնէ մեր ընթերցողները:



Գահիրէի Հ.Բ.Ը.-ի «Սաթենիկ Շ. Զագըր»

Հիմնադրամը 50.000 Ե.Ո.

Կը նուիրէ Գահիրէի և Էյն Շամս համալսարաններուն



Նկարին մէջ ձախէն աջ՝ պրն. Նորայր Տէօվլէքսան, օր. Կարինէ Տէօվլէքսան, պրն. Պերճ Թէրզիսան, Տորթ. Մէկիս Անին, պրն. Մարտիկ Պալատան և պրն. Ռասմի Նավին:

Ցաշորդական երրորդ տարին ըլլալով Գահիրէի Հ.Բ.Ը.-ի «Սաթենիկ Շ. Զագըր» Հիմնադրամը 50.000 Ե.Ո. կը նուիրէ Գահիրէի և Էյն Շամս համալսարաններու կարիքաւոր ուսմողներու ֆոնսին:

Այս առջի Գահիրէի Հ.Բ.Ը.-էն պատուիրակութիւն մը այցելեց եգիպտական համալսարաններու Բարձրագոյն Խորհուրդի և համալսարանական ուսանողներու օժանդակութեան կելյունական ֆոնսի քարտուղար Տորթ. Մէկիս Ամինի և յանձնեց «Սաթենիկ Շ. Զագըր» Հիմնադրամը 50.000 Ե.Ո.-ի փոխագիր մը:

Տորթ. Մէկիս Ամին՝ իր շնորհակալութիւնն ու գնահատանքը փոխանցեց Վերոյիշեալ նուիրատուութեան համար:

Գահիրէի Հ.Բ.Ը.-ի «Սաթենիկ Շ. Զագըր»

Հիմնադրամը 30.000 Ե.Ո.

Կը նուիրէ «Ընթերցանութիւն Բոլորին Համար» ծրագրին

ծրագրին

Ցաշորդական երրորդ տարին ըլլալով Գահիրէի Հ.Բ.Ը.-ի «Սաթենիկ Շ. Զագըր» Հիմնադրամը 30.000 Ե.Ո. կը նուիրէ «Կամաէլէթ Ալ Ռէայա Ալ Մուրաքամելա»-ի՝ (լիակատար խնամքի ընկերակցութիւն) «Ընթերցանութիւն Բոլորին Համար» ծրագրին, որուն նախագահն է եգիպտոսի Հանրապետութեան նախագահին ազնուափալ Տիկինը՝ Սիկան Մուապար:

Գահիրէի Հ.Բ.Ը.-էն պատուիրակութիւն մը այցելեց Վերոյիշեալ ընկերակցութեան ընդհանուր քարտուղար՝ Տորթ. Ալի Սատէք և անոր յանձնեց 30.000 Ե.Ո.-ի փոխագիր մը, որպէս օժանդակութիւն «Ընթերցանութիւն Բոլորին Համար» ծրագրին:

Տորթ. Ալի Սատէք՝ իր շնորհակալութիւնն ու գնահատանքը փոխանցեց Վերոյիշեալ նուիրատուութեան համար:



Նկարին մէջ ձախէն աջ՝ պրն. Պերճ Թէրզիսան, տորթ. Ալի Սատէք, պա. Պերճ Թէշէնսան և Քրիս Միքայէլսան:



Հ.Բ.Ը.Մ.-ի ԳԱՀԵՐԵՒՄ ՄԱՍՆԱԺԻՂԻ «ՍԱԹԵՆԻԿ Ճ. ԶԱԳԸՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՅՆԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՐՈՒԽԱՆԻ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԱԼՊՈՄ

Դեկտեմբեր 1998-ին, Ալեքսանդր Սարուխանի ծննդեամ 100-ամեակին առի կայացած ցուցահամելիսն զուգամեն՝ լոյս տեսա Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի «Սաթենիկ Ճ. Զագը» Հիմնադրամին հրատարակութեամբ, «Ալեքսանդր Սարուխանի կեանքը, Արուեստը և Նուաճումները» վերագրով ալպոմը՝ որ պատրաստութիւնն ու ներկայացումն է եղիպտահայ արուեստագէտ Հրանդ Քէշիշեանի. մուտքի խօսքը գրած է Եղիպտոսի մշակոյթի նախարար՝ Ֆարուք Հուսնի, որուն կը յաջորդեն երկու տարբեր նախարաբաններ՝ եղիպտացի նկարչ-քննադատ Հիւսէն Պիքարի և «Ռուզ ալ Շուսէֆ» Բանդէսի երգիծանկարիչ Կոմաս Ֆարահարի:

Նախարաբաններէն եւր, արուեստագէտ Հրանդ Քէշիշեան ամենապահ բժամներութեամբ ներկայացուցած է Սարուխանի կեանքն ու գործերը, արար ընթերցողին հրամցնելով Սարուխանի կեանքին տարբեր հանգրուանները և երգիծանկարչութեամ ասպարէզին մէջ թողած հնտըք՝ եղիպտական քաղաքական երգիծանկարչութեամ արուեստի ու մամոլին մէջ իր ստեղծած դպրոցով:

Ալպոմին մնջ մասը կը պարունակէ ուսանողական տարիներում նկարած դասական նկարներու շարք մը, ապա քաղաքական և ընկերային թեմաներով երգիծանկարները, որոնք լոյս տեսած են հայ և եղիպտական մամուլին մէջ, ինչպէս նաև նայ և օտար հանրածանօթ ամձերու դիմանկարներու շարք մը՝ Սարուխանի ընտանեկան և յիշատակի լուսանկարներու կողքին:



ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ

Երեսանի Մաշտոցի անուան Մանտենադարնի Գիտական Խորհուրդի որոշումով՝ Գահիրէի մէջ 1998 թուականի վեցշաբորութեան լոյս տեսա, երկար ժամանակէ ի վեր այնքան պաստած՝ Սատողիկ Գէրզենի, ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ, Մատենաշտութիւն, IX-XIX դդ., մնձադիր և ծանալուն աշխատութիւնը, 823 էջ և I-XXXII գունաւոր տախտակներով:

Աստղիկ Գէրզենի ՀՀ Կառավարութեանն առընթեր, Մ. Մաշտոցի անուան Հին Զենագրերու ինստիտուտի վաստակաշատ հայ մանրանկարչութեան մասնագէտներէն մէկն է, որ համբերատար շանադրութեամբ պատրաստած է 464 մանրանկարչներու համառու կենսագրութիւնները և անոնց մանրանկարներու մատենագիտութիւնը:

Այս աշխատութիւնը խմբագրած են՝ պատրաստամ գիտութիւններու թեկնածու, ձեռագրագէտ՝ Ա. Մաթենուսան և քանասիրական գիտութիւններու թեկնածու Ա. Տէր-Ստեփանեան:

Ցառաշաբանին ֆրանսերէն՝ թարգմանութիւնը կատարած է Ա. Զարիչէան:

Հատորը՝ սքանչելի ուղեցույց-տեղեկատու մըն է հայ միջնադարեան արուեստով հետարրուողներուն համար:

«ՏԵՂԵԿԱՑՈՒ»՝ Հայրենի բարձրագոյն գիտական հաստատութեան հետ, այս առաջին սկրտ գրքակցութիւնը՝ իսկապէս շնորհաւորելի է:





ՀԱՄԱՌՈՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Լ.Մ.-ՆՈՒՊԱՐՀ ՍԿԱՌԻՑԱԿԱՆ ԵՒ ԿԱՅՏԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻՄԻՆ ՄԱՍԻՆ

1998 ՏԱՐԵՇՐՋԱՆ

1. Պաշտօնական Այցելութիւններ

Ծարժումիս չորս բաժինները՝ համագնեստեալ, առաջնորդութեամբ իրենց պատասխանատութեամբ, Կիրակի, 26 Ապրիլ 1998-ին, ներկայ գտնուեցան Ս. Պողոս-Պետրոս նկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատրոպահն և Բոգեհանգստեան պաշտօնին, յարգելու համար յիշատակը 1915-ի մէծ եղեննի ճամատակներուն:

2. Շաբաթական հաւաքոյթներ

Ծարժումիս չորս բաժինները՝ կամոնաւորապէս ունեցան իրենց շաբաթական հաւաքոյթները, ամառուան եղանակի ընթացքին, Երեքշաբթի օրերը, իսկ ձմրան եղանակին՝ Ուրբաթ օրերը:

3. Զերնարկներ

Ա- Զերնարկ՝ Կաղամանի Տօնակատարութիւն, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 26 Դեկտեմբեր 1997-ին, Միութեան «Նազարեթ Զամպաքեան» սրանին մէջ:

Բ- Զերնարկ՝ Քերսէն, որ տեղի ունեցաւ Կիրակի, 21 Յունիս 1998-ին, Միութեան մարզաշտին վրայ, որ այս տարի յատկապէս ճոխացած էր նորանոր խաղերու շարքով մը և բազմապիսի նույնարդուվ:

Գ- Զերնարկ՝ Բանակում. այս տարի շարժումիս տարեկան գիշաւոր բանակումը տեղի ունեցաւ «Մարսա-Մայրուի» մէջ, Ուրբաթ 4 Սեպտեմբեր 1998-էն մինչև Կիրակի, 6 Սեպտեմբեր 1998: Նման ձեռնարկներ դադրած էին 1989-էն ի վեր, ուստի առաջինն էր՝ որոն այժմու սկաուտները և կայստերը կը մասնակցէին և որ տեղի կ'ունենար մարզվայրէն դորս, ընութեան գիրկը, իսկական սկաուտի կը կամ կայտի մը «Զալենճ»-ի առջև դմելով, որը՝ ոչինչէն, ինը ստիպուած կ'ուլլար առեղծել իրեն անհրաժեշտ եղածն, եփել իր ճաշը, պահպանել իր բանակատեղին և տոկալ փոքր զրկանքներու: Իսկ գիշերները՝ համախմբուիլ խարոյին շուրջ, երգերով, խաղերով հաճելի եւ անմոռանայի պամեր անցնելով:

Դ- Զերնարկ՝ Կրակ վառելու և ճաշ եփելու մրցում, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 16 Հոկտեմբեր 1998-ին, առաւուեան ժամը 10-էն սկսեալ, շարժումիս սկաուտական և կայտական խմբակներու միջև:

Նոյն օրը՝ կեսօրէ ետք, տեղի ունեցաւ շարժումիս իրարանչիր բաժնի հաւաքոյթներուն ներկայութեան և կէտադրութեան առաջնորդիներու մրցանակաբաշխումը:

Սկաուտական Բաժին

Ներկայութեան Ա-ին՝ սկաուտ Մայքրլ Սոմունեան:

Կէտադրութեան Ա-ին՝ սկաուտ Այգ Գալայնեան:

Կայտական Բաժին

Ներկայութեան Ա-ին՝ կայտ Նորա Մանճըրեան:



ԱՌԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը. - ՆՈՒՊԱՐԻ ՍԿԱՌԻՑԱԱՆ ԽՈՒՄԲԸ 1998 ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

Նախած ձախէն աջ՝.

Արծուիկներու փոխ-խմբապետուիի՝ Անուր Զարպիսանէլեան, Արժ. Խմբապետուիի՝ Տոնինիք Զարպիսանէլեան, կատուական քածնի խմբապետուիի՝ Լիսի Ճռնեան, սկառուական քածնի աւագ խնք՝ Կարպիս Թօնտուեան, կայտերու փոխ-խմբապետուիի՝ Գարին Լելիկնեան, սկառուներու փոխ-խմբապետ՝ Վան Խորայէլեան: Կայսած ձախէն աջ՝ գայլիկ Անդրօ:

Ա. շարք, կայսած ձախէն աջ՝ սկառու Մայք Սունունեան, արծուիկ՝ Տէյզի Սովորանեան, կայտեր՝ Դանիա Արքինեան, Գարին Պասմածեան, Նորա Մանճըլիքեան, Հուրի Կիրինեան, Հուրի Պալքայեան, Խոյ Զատոյեան եւ սկառու՝ Այգ Գալայձեան:

Բ. շարք կայսած ձախէն աջ՝ գայլիկներ Վահէ Արքինեան ու Կարի Խանձեան, արծուիկներ՝ Էլեսի Մասուր, Այն Գալայձեան, Քրիստին Մանուկեան:

Նկարին մէջ կը բացակային՝
Գայլիկներու Արէլա՝ Կարէն Ճռնեան, և կայտերու փոխ-խմբապետուիի՝ Ռիբա Ռէկնեան:

Կէտաղրութեան Ա.-ին՝ կայտ Հուրի Կիրինեան:

Գայլիկներու Բաժին

Ներկայութեան Ա.-ին՝ գայլիկ Կարի Խանձեան:

Կէտաղրութեան Ա.-ին՝ գայլիկ Վահէ Արթիւնեան:

Արծուիկներու Բաժին

Ներկայութեան Ա.-ին՝ արծուիկ Քրիստին Մանուկեան:

Կէտաղրութեան Ա.-ին՝ արծուիկ Այն Գալայձեան:

Վերջացնելու համար մեր համառօտ տեղեկութիւնը, կու գանք շնորհակալութիւն յայտնելու Հ.Մ.Ը. ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, Տիկնանց յանձնախումբի անդամներուն, Ծարժումիս անդամ անդամութիւններու ծնողներուն և համակիրներուն՝ որոնք անընհատ զօրավիճ կը կանգնին և կը քաջալելն Ծարժումիս գործունեութիւնը:



ՀՈՒՐԵՐ

ՊԵՏՐՈՒԹ

ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵՍՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ «ԶԱՐԹՈՆՔ» ՄԱՄԼՈՅ ՄՐՑԱՆԱԿԸ

1998 տարուան Հայկացուն և Անահիտ Վարդիվառեանի ամուսնք «Զարթօնք» մամլոյ մրցանակին արժանացաւ, լիբանանահայ հրապարակագիր, խորագիր և մամկավարժ՝ պրն. Ժիրայր Դանիէլեան, որ բեղուն գործունեութիւն ունեցած է հայ մամույին մէջ:

Ժիրայր Դանիէլեան պատասխանատու խմբագիրն է «Շիրակ» գրական ամսագրին և տնօրէնն է Հ.Բ.Ը.Մ.-ի երկրորդական զոյգ վարժարաններուն:



Ա.ՐԹԻՒՐ ՆԱԶԱՐԵՍՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԲՈՍԱԾՐՁԻԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԵՆՍՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Լիբանանի կառավարութեան նոր կազմի ցանկին մէջ է հայ նախարարի մը անունը՝ Արթիւր Նազարեան, որպէս զբոսաշրջկութեան և կենսոլորտի նախարար:

Պրճ. Նազարեան ծնած է Պէյրութ՝ 1951-ին, որդին է Հ.Բ.Ը.Մ.-ի բարերար՝ տէր և տիկին Կարպիս Նազարեաններու: Ան աւարտած է Հ.Բ.Ը.Մ.-ի Տեմիթթեան Վարժարանը և Կյանքաշմկըչն Զըմիթթար-ը, ապա վկացուած է Ֆիլատելիֆիյ համապարանի Մրդմկը Բլակլըրսկի ճիշէն: Ան վեթերան անդամ է Հ.Բ.Ը.Մ.-ի և Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ի Օրչանակալին թանձնաժողովի գանձապահն է:

ԿԻՊՐՈՍ

ԿԻՊՐՈՍԱՅԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒԻՆ

Կիպրահայութիւնն իր որոշումը տուա մասնակցելու 1999-ին ամրան երեանի մէջ կայանալիք Բամահայիկան խաղերուն, ֆութպոլի և թեմիսի միացեալ խումբերով:

Կիպրահայ գաղութին մարզական երկու ակումբները՝ Հ.Բ.Ը.Մ. և Հ.Յ.Մ. կազմած են պատասխանատու միացեալ մարմին մը, որուն առաջին հանդիպումը տեղի ունեցաւ ապս տարուան միջքը, Անդրկայութեանը Միջազգային Հայկական Ողիմայիկան Կոմիտէի Անդրկայացուցիչ՝ Աշոտ-Մելիք Շահնազարեանի և Կոմիտէի անդամներէն Հրաչ Մանուկեանի:

Ցիշատակելի է, որ մօտ 35 քաղաքներ պատրաստակամութիւն յայտնած են սոյն խաղերուն մասնակցելու համար, որ տեղի պիտի ունենայ 28 օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999-ին:

ԱՆԴԱՄԱԳՐԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



Ուրախութեամբ կը տեղեկացնենք՝ թէ Հ.Բ.Ը.Մ.-ի անդամներէն, և երբեմնի «Կոումկ» երգչախումբի համակրելի մենակատար-ներէն՝ Տէր և Տիկին Ռաֆֆի Չէճէնեաններ, 1998 թուլիս 9-ին Չեխիոյ մէջ, բախտաւորուած են աղջիկ զաւակով մը՝ զոր անուանած են Անի:

«ՏԵՂԵԿԱՑՈՒ» Զերմագին շնորհաւորութիւններ նորածինին ծնողքին և մեծ ծնողներուն:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

19 Դեկտեմբեր 1998-ին՝ մահացաւ Գանիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի անդամունի Օր. Նայիրի Գամպէրեանի մայրը՝ ոխտաւորունի Ս.Անհիտ (Եանըգեան) Գամպէրեան:

13 Դեկտեմբեր 1998-ին՝ մահացաւ Գանիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի երկարամեայ անդամունիներէն Ալիս (Տէօվլէրեան) Գալսէրեան: Հանգուցեալը Միութեանս կ'անդամակցէր 1972-էն սկսեալ:



Դեկտեմբեր 1998-ի երկրորդ կիսում՝ Դամասկոսի մէջ մահացաւ Գանիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի անդամունիներէն՝ Տիկ. Սաթենիկ Արգարեանի հայրը՝ ողբացեալ Վահագն Սարգիսեան:

15 Յունուար 1999-ին՝ մահացաւ Գանիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի երկարամեայ անդամներէն Յովսէփ Մ. Մովսէսեան: Հանգուցեալը Միութեանս կ'անդամակցէր 1971-էն սկսեալ:

«Տեղեկատու». Մեզմէ առ յաւէտ բաժնուած այս անդամներուն հարազաւներուն և ընտանեկան բոլոր պարագամներուն խորազգաց ցաւակցութիւն կը լայտնենք :



ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի Վարչութիւնը սիրով կը հրաւիրէ Միութեանս բոլոր անդամները, Տարեկան Ընդհանուր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ, Չորեքշաբթի 24, Մարտ 1999-ին երեկոյեան ժամը 7-ին՝ Հելիոպոլսոյ Հ.Ս.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ մարզարանին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

- 1- Ընթերցում և վաւերացում նախորդ տարեկան Ընդհանուր Ժողովի ատենագրութեան:
- 2- Ընթերցում վարչութեան 1998 տարեշրջանի միամեայ գործունեութեան բարոյական տեղեկագրին:
- 3- Ընթերցում վարչութեան 1998 տարեշրջանի միամեայ գործունեութեան նիւթական հաշուետուրթեան:
- 4- Ընթերցում հաշուեքննիչի տեղեկագրին:
- 5- Վաւերացում 1999 տարեշրջանի նախահաշի պիտեհի:
- 6- Ընտրութիւն հաշուեքննիչի և պատուագինի որոշում:
- 7- Ընտրութիւն վարչական երկու նոր անդամներու: